ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԶՆՎԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ.Ազնվաձոր 1 փող.2նրբ.1 ☎ /0322/ 6-03-73

Թիվ 323
19. 11.2021թ

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Խաչատրյանին

Կից Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի ղեկավարի 2021 թ.-ի թիվ 64 որոշումը:

Առդիր՝1 էջ

Համայնքի ղեկավար՝ Ն. Հովսեփյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԶՆՎԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

<<15>>11. 2021թ. հեռ.(0322)6-03-73

Թիվ -64

ՈՐՈՇՈՒՄ

ԱԶՆՎԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ կետերով,43-րդ հոդվածով,<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով,<<Քաղաքաշինության մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հիմք ընդունելով համայնքի ավագանու 12.11.2021 թվականի թիվ 29 որոշումը և Կարինե Վազգենի Ավագյանի հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Կարինե Վազգենի Ավագյանին Ազնվաձոր համայնքի վարչական տարածքում սեփականության իրավունքով պատկանող 06-010-0300-0002 ծածկագրով 0,148455 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքի նպատակային նշանակությունը,ձկնաբուծական արհեստական լճակ կառուցելու նպատակով և ձկնաբուծական տնտեսություն հիմնելու նպատակով փոխադրել ջրային ֆոնդի հողերի նպատակային նշանակության,լճերի համար նախատեսված հողերի գործառնական նշանակության :

2.06-010-0300-0002 ծածկագրով 0,148455 հա ջրային ֆոնդի հողերի նպատակային նշանակության,լճերի համար նախատեսված հողերի գործառնական նշանակության փոխադրված հողամասին տրամադրել Ազնվաձոր համայնք 1-ին փող 3 հողամաս իշխանաձոր փոստային հասցե:

3.Հաստատել 06-010-0300-0002 ծածկագրով 0,148455 հա հողամասում ձկնաբուծական արհեստական լճակ կառուցելու նախագծման համար ճարտարապետահատակագծային առաջադրանքը և տրամադրել հողամասի սեփականատիրոջը նախագծման աշխատանքները սկսելու համար:

4.Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը արտացոլել Ազնվաձոր համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում:

Համայնքի ղեկավար՝ Ն. Հովսեփյան